

1 ժամու եւ 30 վայրկեանին մէջ՝ փրփրացումը հաւելիթ, գարեի ապուր, խորոված երէ, կիսեփ խնձոր, տանձ, եփուած եւ իրեւ եղած պտուղ, եփուած սալմոն (saumon), կարմրակալայ (ruite), շափն, ծնեբեկ, լախուր, ոլորի, սուպի, բակլայի, գարույ ծեծած, վարսակի ալեւոյ:

1 ժամու եւ 35 վայրկեանին մէջ՝ եփուած ըղեղ եւ արմատալոր:

2 ժամու մէջ՝ եփուած կաթ, անեփ հաւելիթ, եփուած գարի, խորոված եփալեւարդ, եփուած թթու խնձոր, եփուած ձաղձառ:

2 ժամու եւ 15 րոպէի մէջ՝ թարմ եւ անեփ կաթ, եփուած հոգկահաւ:

2 ժամու եւ 30 րոպէի մէջ՝ խորոված վայրենի սաղ, եփուած գառնենի, խորոված խոճկոր, տապկած գետնախնձոր, փոճկով եփուած լուբիա, բակլայ, ոսպ, ոլոր:

2 ժամու եւ 45 վայրկեանին մէջ՝ խորոված եղենի, ոսորէ:

3 ժամու մէջ՝ պղպաղեղով հաւելիթ, շոգեփեայ ոչխարենի, անեփ ապուր, կասկարայ եղած եղան միս, խորոված վահանառ:

3 ժամու եւ 15 վայրկեանին մէջ՝ ստեպլեն, աղցան, կաղաձ:

3 ժամու եւ 30 րոպէի մէջ՝ խորոված, ալած խոզենի, կարաք, հին պանիր, թարմ երշիկ, եփուած եղենի, ալած եղենի, եփուած գետնախնձոր, եփուած շոգաժ, ոչխարենի ապուր, թարմ ցորենահաց, եփուած ծովաբոլի, եփուած սիստոր:

3 ժամու եւ 45 վայրկեանին մէջ՝ եփուած եղան եղենի, խահաւով թարմ հաց:

4 ժամու մէջ՝ եփուած եւ տապկած բնտանի թուռնք, ոչխարենի եւ հորթու խորոված, եղան միս ապուր, ալած կարմրամիս ձուկ, չոր հաց՝ խահաւով:

4 ժամու եւ 15 վայրկեանին մէջ՝ վայրենի թուռնք, բանջարեղեններով եփուած խոզ միս:

4 ժամու եւ 30 րոպէի մէջ՝ ալած սալամի:

5 ժամու մէջ՝ շատ պղպաղեղով հաւելիթ, հորթու կիսեփ խորոված, անթարմ ոչխարենի տապկած, եփուած նեարդ, ուտեի անանոց մորթ, թիւրկեռաս, սալոր, հաղարջ, շուշ, սուշի, կաղնի, ընկոյղ:

6 ժամու մէջ՝ որ եւ իյէ աղած անթարմ միս, տապկած գետաքարադիպ (lamproie) եւ տապկած եղան օձառ:

Այս ընդհանուր տեսութենէն կը տեսնուի որ տկար ուսմանը ունեցողներուն 4 ժամէն աւելի աւելող սնունդ պէտք չէ տալ: 2էթին եւ ծարար մարտորդ թիւնը կը գտնարընեն, ընդհանուր ապ, համեմատ, պղպղ, կիսամման, մանանիկ, հին պանիր, բոլի, շաքար եւ գինի մարտորդ թեան կ'օգնեն:

ՄԱՆԻԿԱԿԱՐԻՐ

Ազգամասնոր Անգղիոյ:

Անգղիոյ այս տարուան ազգահամարէն կը տեսնուի որ մեծ քաղաքացի մէկն միայն 1 ինքնուր բնակչաց նուազում ունեցած է, եւ տասը տարուան

մէջ 552.508էն 518.000 ի իջած է: Իսկ ընդհանուր ինչ ինչ քաղաքացի բնակիչներն ըստ բնակարանի բազմացած են. զոր. որ. Լոնտոնի բնակիչը 3,800,000.00, 4,200,000.00: Մանչեսթրին 462,000.00, 505,000.00: Պիտերբուրգը 400,000.00, 419,000.00, Լիստի 309,000.00, 387,000.00, Շէֆ. Ֆիլտին 285,000.00, 324,000.00 բարձրացած են: — Դերբին կամ բուն Լոնտոնի բնակչաց անօժի վերջին տասնամակի մէջ զգալի եղածացած են մնացած է: Իսկ ընդհանուր աւելումը Լոնտոնի անօժը միեւնոյն մնացած է: Ըստ նորագոյն ազգահամարին՝ Դերբին Լոնտոնի բնակչաց թիւն 4,211,056.00, իսկ արտաքինը՝ 1,422,276.00 կը հասնի, ամբողջն ի միասին 5,633,332 հոգի: Այս թիւն այնպիսի ահագին գումար մըն է, զոր ի միասին նկարել անձամ գտնարին է: Մեծն Լոնտոնի ամբողջ բնակիչը՝ անգղիական գաւառներու 27 մեծագոյն քաղաքներն բնակիչներն կեն միլիոն աւելի է, եւ բոլոր Բեդֆորդի բնակչաց թուովը գրեթէ կը հասնասին, Հետեւեալ երազական տէրու թեանց բնակչաց թուէն աւելի մեծ է. Պուլիտրիա՝ 3,000,000, Գանիա 2,200,000, Բուլտոտան 2,000,000, Կորուսեկիա 2,000,000, Բորդուկալ 4,500,000, Սաքսոնիա 3,200,000, Շուէս 4,800,000, Զալեյերա 3,000,000: Առաւել եւս զարմանալի է Լոնտոնի եւ Բրիտանական ամենամեծ զաղթականութեանց համեմատութիւնը: Ինչպէս Գանտապի՝ նոյնպէս ալ Աւստրալիայ մակերեսութիւնը բոլորականութիւնը եւրոպիայ չափ է: Եւրոպիոյ աշխարհացոյց տախտակի վրայի փոքր կէտը՝ որ Լոնտոն կը կոչուի, Գանտապիէն կեն միլիոն աւելի՝ իսկ Աւստրալիայի գրեթէ կը կրնի բնակիչ ունի:



ՔԱՂԱՔԱՐԱՐ ԵՄԱՐԱՐԱՐ

Վիեննա, 28 Յունուար, 1892 :

Բովանդակ Եւրոպայ այս ծմն կը ծաղակ ընդհանուր հիւանդութիւն մ'որ շատ տեղեր աւելի մահաբեր է այժմ քան յառաջ: Բազմամիլի քաղաքատեղան անձանց մէջ մեղան երկու պետական անձինք, որոնց մահը քաղաքագիտական նշանակութիւն ունի: Առաջինն եղաւ Եգիպտոսի Մուհամմէտ Թէվֆիկ ի բռնիք, որ ծնած էր 1852ին, եւ 1866ին գահաժառանգ յրատարակուած Եգիպտոսի: Յիշեալն արդէն 1873ին ամուսնացած էր, եւ առաջին անգամ՝ իրապապական 1879ին իրրեւ պաշտօնէն նախագահ է նոյն տարւոյն օգոստոս 6ին ի բռնիք յրատարակուեցաւ Վեհ. Սուլթանէն: Իր վարչութեան ժամանակ

նակը ծագեցան 1881ին խոռվութիւնքն յեզիպտոս, միւս կողմանէ Սուտանի մէջ Մարտիներու պետութիւնը կանգնեցաւ: Անգղիոյ միջամտելովն խաղաղեցաւ երկիրը: Իւր երկու որդւոց աւագն՝ Աբբաս Փաշա՝ չորր մահը լսելուն պէս Վիեննայէն, ուր ուսման համար կը կենար տարիներէ ի վեր, ծամբայ ելաւ յԱղեքսանդրիա, ուր մեծ ընդունելութիւն գտաւ ժողովրդեղնէ եւ անգղիական նաւատորմէն: Վեհ. Սուլթանը հաստատեց երկտասարդ խորտիկն իւր հօր տեղը: Այժմու իշխանին կրտսեք եղբայրն՝ Մուհամմէտ Ալի Պէյ դեռ ի Վիեննա է:

Անգղիական արքունիքը մեծ սգով պատեց Անգղիոյ ապագայ գահաժառանգին վաղահաս մահը, որ 28 տարեկան մնաւ: Բլարենսի եւ Աւանդալի իշխանն Ալբերդոս Վիկտոր անդրանիկն էր Վադէսի իշխանին եւ ծնած էր 1864ին. դեռ նոր նշանուած էր Եեքի Մարի իշխանուհւոյն հետ: Այժմ՝ իւր իրաւունքներն անցան իւր կրտսերագոյն եղբոր՝ Գէորգ իշխանին:

Ծանր խնդրոյ կերպարանք առած էր Մաղղէպի վիճակը: Թուաթ հանգրուանին վրայ կառավարութեան խաւրած մէկ արշաւանքն ծախող եղաւ: Միւս կողմանէ Թանկէրի մօտ ապստամբութիւն ծագեցաւ, եւ իրաց վիճակն այնչափ գէշցաւ որ վախ կար թէ Թանկէր, ուր կը նստին եւրոպացի հիւպատոք եւն, պիտի իյնայ խոռվարկուաց ճեղքը, եւ մինչեւ թէ Մաղղէպի համար ծգնաժամ կընայ յառնել: Եւրոպական Պետութեանց մէջ Անգղիա, Գաղղիա եւ Սպանիա նաւեր խաւրեցին ի պաշտպանութիւն, որպէս զի Մաղղէպի այժմու կացութիւնը յանկարծական փոփոխութեանց ենթարկելու վտանգ չըլլայ: Ըստ նորագոյն լրոց՝ այժմ՝ դարձեալ խաղաղացած է երկիրը:

Խոռվութիւնք եղան նաեւ Պարսից մէջ՝ Եփեսոսի մենաշնորհի պատմառաւ, քայց այժմ՝ կրկին խաղաղեցաւ:

Փոքր Հիլիի եւ Միացեալ Նահանգաց մէջ կրկին սաստկացած է գժտութիւնը: Վերջին քաղաքային պատերազմի

ժամանակ Միացեալ Նահանգաց մէկ նաւուն նաւաստեաց եւ չիլեցի ամբոխին մէջ աննշանակ կոխ մը պատահած էր: Միացեալ Նահանգք որ համամերիկեան գաղափարն իրագործել կ'ուզէին եւ ասոր համար ծածուկ կողմն կը ընէին թէ Պալմասէտային ի Հիլիի եւ թէ Փոնսէլայի ի Պրազիլիա: Երկու տեղն ալ չյաջողեցան յիշեալ անձինքն իրենց դիրքը պահել: Այն օրէն ի վեր Միացեալ Նահանգաց եւ Հիլիի մէջ գժտութիւն կայ՝ պատրուակ առնելով վերոյիշեալ նաւաստեաց դէպքը: Հիլիի վարչութիւնը տեղի տուաւ՝ որչափ կընար՝ հատուցում՝ պահանջող դրացոյն. երբ կը յուսացուէր թէ խնդիրը լսեցաւ՝ ուրիշ պատրուակ մէ գտան Միացեալ Նահանգք՝ իւր թէ Հիլիի նախկին Մատթա պաշտօնէին մէկ գրութեան մէջ վիրաւորիչ խօսքեր կան: Այժմ՝ կրկին հատուցում կը պահանջեն Միացեալ Նահանգք, մինչ անգամ՝ պատերազմի սպառնալիք վերջնագիր մ'ուղարկած են:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՌԻՍՏՈՒՄԵԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Պղատոնի հին հայ թարգմանութիւնը. 33:

ԱՇԽԱՆԱԳՐԱԿԱՆ — Ուղեւորութիւն ի Փոքր-Ասիա. 37: — Պէկ-տաղ եւ Մալաթիա. 40:

ԳՐԱԿԱՆ — Հայկական ծնողահոր ծննդաբանութեան լեզուաց ի Պետերբուրգ. 45: (Պատկերաւ) — Ի Կ. Ս. Ա. Տէրվիշան. 54: (Պատկերաւ) — Եւրոպական Նորագիւտ արժանագրութիւն. 54:

ՄԱՏԵՆԱՌՈՍԱԿԱՆ — Ուղեւորեան Մնար. Վ., Պատմութիւն գաղղականութեան հայոց ի Լիվոնոյ. 55:

ԱՆԱՏԱՏԵՆԴԱԿԱՆ — Նամակ առ քարեկան անոր դստեր մահուան առթով. 56:

ՍՐՈՒՅԵՏԳԻՏԵԿԱՆ

ԳԵՂԱՌՈՒՅԵՏԱԿԱՆ — Երջապայութիւն նկարչաց աշխարհին մէջ. 57:

ԱՅԼԻՆԵՑԼԵ

ՆՈՐԱՄԱՌԻԲ — Թղթոց շատակերութիւնը. 62:

ՏԵՏԵՍԱԿԱՆ — Ո՞ր կերակուր դիւբամար է. 62:

ՄԱՆԱՄԱՌԻԲ — Ազգահամար Անգղիոյ. 63:

ԳԵՂԱՏԵԿԱՆ ՏԵՍԵԻԹԻՒՆ 63:



ՀՐԱՏԱՐԱՅԻՉ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ ԽՄԱՐԱԳԻՐ

Կ. ԱՍՓՈՅՆԷՆ Կ. ՊԱՐՈՆՉ

ԱՒԵՆԵԱՆ. ԻՐԻԹՈՐԵԱՆ. ԶՊՐԱՆ